ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/365 «01» 12 2025թ.

Վինդորանի ՍՊԸ-ի տնօրեն
Հ. Աղաբեկյանին (ՀՎՀՀ 05560202)
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ
Հ.Շահինյան փ. 4 նրբ./12 վ/շ,
էլ. հասցե՝ windoraniarmenia@gmail.com
Հեռ.՝ +37477855081

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Վինդորանի» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 03.02.2025 թվականի կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–2025/Հ–15–3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8-րդ չափաբաժնի, ինչպես նաև 12.03.2025 թվականի կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը պարտավոր էր մատակարարել 2500 հատ արտացոլող բաճկոնակներ (այսուհետ՝ Ապրանք), սակայն, որոնք Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել:

11.07.2025թ. թիվ 15/12/182826-25 գրությամբ <<ՎԻՆԴՈՐԱՆԻ>> ՍՊԸ- ին ծանուցվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետների խախտման մասին:

«Վինդորանի» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս մասնակի չի մատակարարվել Ապրանքը և չի կատարվել Պայմանագրային պարտավորությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով

սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և Վինդորանի ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-15-3 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 42 600 (քառասուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամը և սահմանված տույժը յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ չմատակարարված ապրանքների մասով՝ առ 26.11.2025թվականը, որի հանրագումարը կազմում է 252 192 (երկու հարյուր հիսուներկու հազար հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 1 743 750 /մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 1 162 500 / մեկ միլիոն հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով՝ սահմանված ժամկետում:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Վինդորանի» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

« 01 » 12 2025թ.

ք.Երևան

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռախոս՝ 010 59 66 32